

Ուրախ եմք, գօտեպնդուած եւ հպարտ՝ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցի նախաշեմին անգամ մը եւս համախմբուած տեսնելով հայրենաբնակ եւ աշխարհասփիւռ հայութեան բոլոր բաղկացուցիչներու ներկայացուցիչները, ազգային հիմնախնդիրներու նախանձախնդիր հայորդիներ, նախաձեռնութեամբ եւ հրաւերով Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութեան, եւ ուրեմն՝ հովանաւորութեամբ հայկական պետութեան:

Դուք եկած էք քննարկելու բոլորս՝ հաւաքաբար, եւ մեզմէ իւրաքանչիւրը՝ անհատապէս յուզող եւ տագնապեցնող համազգային հիմնախնդիրներ, որոնց առաջնահերթութիւնները ճշդել կը դժուարանանք յաճախ: Բայց բոլոր պարագաներուն տակ եւ բոլոր օրակարգերուն դիմաց առաջնահերթութեանց առաջնահերթը էր ու կը մնայ մեր միասնականութիւնը, որ մեր բոլոր նախաձեռնութիւնները, առաջադրանքներն ու պայքարները զօրացնող ուժը պիտի ըլլայ: Ան իր արտայայտութիւնը պէտք է գտնէ ոչ միայն մեր պատմական եւ հաւաքական յիշողութեան մէջ, այլ մեր պահանջատիրութիւնը յարաճուն վճռականութեամբ շարունակելու մեր անկոտրում կամքին մէջ, համայն Հայութեան առջեւ ծառացող նորագոյն խնդիրներուն լուծումը հետապնդելու մեր յանձնառութեան մէջ, յիշելու եւ պահանջելու կարգախօսը հետապնդելու աշխատանքին մէջ, մեր հրապարակային բոլոր ձեռնարկներուն մէջ:

Այդ միասնականութեան շաղախը Հայկական Պետութիւնն է, մեր՝ բոլորիս, համայն Հայութեան թիկունքը: Իսկ խարիսխը՝ համայն Հայութեան նուիրական Հայրենիքը՝ Հայաստանը: Այդ թիկունքին ու խարիսխին հզօրացումը առաջին գրաւականն է ոչ միայն 100-րդ տարելիցին առիթով, այլ մեր ժողովուրդին համար բախտորոշ բոլոր առիթներով որդեգրուած առաջադրանքներու, որոշումներուն ու մշակուած ծրագիրներուն յաջողութեան: Հայ Եկեղեցին այդ թիկունքին ու խարիսխին գլխաւոր յենարանն է, համահայկական միասնութեան շաղախը զօրացնող երկնառաք ուժը:

Հայկական այսպիսի միասնականութեան վկայութիւնը տալու կոչուած է մեր ժողովուրդը՝ իր խումներամ ներկայութեամբ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած հայածես մեծաշուք սուրբ Պատարագին, զոր Մենք մատուցանելու ուրախութիւնը պիտի ունենանք Ֆրանչիսկոս Սրբազան Զահանայապետին նախագահութեամբ, 2015-ի Ապրիլի 12-ին, Վատիկանի Սուրբ Պետրոսի Պազիլիքային մէջ, եւ որուն ընթացքին Սրբազան Զահանայապետը պիտի տայ իր պատգամը: Սովորական ձեռնարկ մը պիտի չըլլայ ասիկա, այլ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջազգային ամենէն ուժեղ արձագանգը ունեցող իրադարձութիւններէն մէկը, որովհետեւ այդ օր Սբ. Պետրոսի Պազիլիքային մէջ համախմբուած պիտի ըլլան Կարդինալները եւ Կաթողիկէ Եկեղեցւոյ հոգեւորական բարձրագոյն դասի նրկայացուցիչները, Վատիկանի մօտ լիազօրագրուած օտար դեսպանները եւ հայածես

արարողութեանց վրայ բացուած պիտի ըլլան միջազգային զանգուածային լրատուամիջոցներուն լուսարձակները:

Այս իրադարձութիւնը պիտի հանդիսանայ միաժամանակ՝ քրիստոնեայ աշխարհի մեծագոյն առաջնորդին կողմէ՝ 1915-ի աշխարհացունց Եղեռնը իբրեւ ցեղասպանութիւն դեռեւս պաշտօնապէս ճանչնալ վարանող պետութիւններուն ուղղուած հրաւեր մը ո՛չ միայն ճանչնալու 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը, այլ դատապարտելու զայն եւ պահանջելու անոր հետեւանքներուն դարմանումը եթէ իրապէս կ'ուզեն որ մարդկութեան խնայուին նման ցեղասպանական արարքները:

Վստահ ենք, որ Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նուիրուած վատիկանեան այս եզակի իրադարձութիւնը պիտի զօրացնէ ճշմարտութեան, Արդարութեան եւ Իրաւունքի վերականգնումին ի խնդիր Հայ Ժողովուրդին պահանջը:

Թող Աստուած իր հովանին անպակաս ընէ այդ պահանջատիրութեան դիրքերուն վրայ կանգնած իւրաքանչիւր հայորդիի վրայէն:

ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.

Կաթողիկոս Պատրիարք  
ՏաննԿիլիկիոյ կաթողիկէ Հայոց

Պէյրուօ, 21 Օգոստոս 2014